

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2016 թվականի  
մարտի 24-ին կայացած նիստի

**Օրակարգ.**

1. 2016-2017 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանի հաստատում:  
/զեկ. մեթոդ. խորհրդի նախ. պրոֆ Թ.Գ.Վարդանյան/
2. 2015-2016 ուստարվա ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների ավարտական և թեզերի կատարման ընթացքը ամբիոններում  
/զեկ. փոխդեկան պրոֆ Վ.Պ.Վարդանյան/
3. Օգտակար հանձնների հանքավայրի ամբիոնի ասպիրանտ Վ.Մ.Մանուկյանի «Հանքային դաշտերի երկրաբանա-երկրաֆիզիկական բնութագրերի վերլուծությունը պղինձ-պորֆիրային հանքակուտակների գնահատման նպատակով (ՀՀ տարածքի օրինակով)» վերնագրով ատենախոսության քննարկումը  
/զեկ. ՕՀՀ ամբ. ասպիրանտ Վ.Մ.Մանուկյան/
4. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2016-2020թթ զարգացման ռազմավարական ծրագրի (իրականացման ժամանակացույց-պլան) քննարկում:  
/զեկ. ՕՀՀ ամբ. դոց. Հ.Բ.Մովսիսյան/
5. Մրցույթ
6. Ընթացիկ հարցեր

**ԼՄԵՑԻՆ** - Մեթոդ խորհրդի նախագահ Թրահել Գերասիմի Վարդանյանի հաղորդումը 2016-2017 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ: Իր խոսքում Թ.Վարդանյանը նշեց, որ գրեթե բոլոր մասնագիտությունների (Քարտեզագրություն և կադաստրային գործ, Երկրաբանություն, Մերվիս) ուսումնական պլաններում կատարվել են առարկայական ինչպես նաև կրեդիտատար փոփոխություններ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Մ.Ա. Գրիգորյանը** – Նա առաջարկեց հաստատել ուսումնական պլաններում ամբիոնների կողմից ներկայացված և հիմնավորած առարկայական փոփոխությունները, քանի որ վերջիններս ուղղված են <Աշխարհագրություն> մասնագիտության

հիմքի ամրապնդմանը: Մ.Գրիգորյանը հավելեց նաև, որ փոփոխված ուսումնական պլանները մրցունակ են դարձնում մասնագիտությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2016-2017 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանը՝ ներառելով կատարված փոփոխությունները:

**ՀՄԵՑԻՆ** – Փոխդեկան Վ.Վ.Վարդանյանի հաղորդումը 2015-2016 ուստարվա ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և թեզերի կատարման նախապատրաստման ընթացքի վերաբերյալ: Իր խոսքում Վ.Վարդանյանը նշեց, որ ատեստավորման քննությունների հարցաշարերը պատրաստ են: Ամբիոնները հետամուտ են և մեծ աշխատանք են տանում ուսանողների հետ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Մ.Ա.Գրիգորյանը** – Նա առաջարկեց նախապես կազմել խորհրդատվության օրերի ժամանակացույց:

**ՀՄԵՑԻՆ** - Օգտակար հանձնների հանքավայրի ամբիոնի ասպիրանտ Վ.Մ.Մանուկյանի գիտական հաղորդումը «Հանքային դաշտերի երկրաբանա-երկրաֆիզիկական բնութագրերի վերլուծությունը պոլինձ-պորֆիրային հանքակուտակների գնահատման նպատակով (ՀՀ տարածքի օրինակով)» ատենախոսական թեմայով: Վ.Մանուկյանը մանրամասն ներկայացրեց ատենախոսության թեմայով իր կողմից կատարած աշխատանքները և ներկայացրեց համապատասխան եզրակացությունները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Մ.Ա.Գրիգորյանը** – Արդյո՞ք նույնն է հանքային դաշտի պատկերը և առկա է արդյո՞ք տարբերություն ուսումնասիրված բոլոր հանքային դաշտերում: Իր հարցադրումներում Մ.Գրիգորյանը փորձեց ճշտել գրավիհետախուզության կորի ցայտուն առանձնացված հատվածների մեկնաբանությունը: Ի հավելումն իր հարցադրումներին, Մ.Գրիգորյանը շեշտեց Վ.Մանուկյանի պրպտող գիտնական լինելու մասին և բարձր գնահատեց ասպիրանտի կատարած աշխատանքը:

**Վ.Պ.Վարդանյան** – Որքա՞ն է կազմում հանույթի տոկոսը (%): Արդյո՞ք կատարվել է հարուցված բեռնացման մեթոդ:

**Ժ.Ա.Աչոյան** – Ո՞ր հանքային մարմնի վրա է կատարվել անմիջական ուսումնասիրությունն ասպիրանտի կողմից, և արդյո՞ք կատարված ուսումնասիրությունը բավարար չէր, և անհրաժեշտություն կար կատարելու նոր դիտարկումներ: Արդյո՞ք երկրաֆիզիկական մեթոդների կիրառումը թույլ է տվել բացահայտելու պղնձի հանքայնացումներ:

**Մ.Գ.Մանասյան** – Ինչ է ենթադրում <Պաշար> ասվածը՝ նշանակություն, քանակ թե արդյունաբերություն

**Ս.Հ.Հայրոյան** – Արդյո՞ք կա նման ուսումնասիրության միջազգային փորձ:

**Ս.Ռ.Սովաթյան** – Ինչ սկզբունքով է կատարվել հանքավայրերի դասակարգումը /փոքր, միջին, խոշոր, խոշորագույն/:

**Ա.Ս.Սարգսյան** – Իր խոսքում նա նշեց, որ կատարվել է մեծ աշխատանք: Իրականացվել է հետևողական ուսումնասիրություն երկրաֆիզիկական դաշտերի և հանքավայրի միջև:

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանն առաջարկեց լսել Վ.Մանուկյանի 2 ղեկավարների կարծիքը ներկայացված ատենախոսական թեմայի վերաբերյալ:

**Ռ.Ս.Մովսեսյան** – Ռ.Մովսեսյանը շեշտեց ասպիրանտի որակական հատկանիշները.- պարտաճանաչ է և ժամանակին կատարում և ներկայացնում է աշխատանքի հետ կապված ցանկացած հանձնարարական կամ լուծում պահանջող հարցերը:

**Ռ.Ս.Մինասյան** – Ռ.Մինասյանը նշեց, որ միակ մտահոգությունը նյութի բացակայության խնդիրն էր, որի լուծումը ստացանք Վ.Մանուկյանի մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ:

Բոլոր հարցերին Վ.Մ.Մանուկյանը տվեց հանգամանալից պատասխաններ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Օգտակար հանձոների հանքավայրի ամբիոնի ասպիրանտ Վ.Մ.Մանուկյանի գիտական հաղորդումը «Հանքային դաշտերի երկրաբանա-երկրաֆիզիկական բնութագրերի վերլուծությունը պղինձ-պորֆիրային հանքակուտակների գնահատման նպատակով (ՀՀ տարածքի օրինակով)» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության և տալ համապատասխան եզրակացություն:

**ԼՄԵՑԻՆ** - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՕՀՀ ամբիոնի դոցենտ Հ.Ի.Մովսեսյանի հաղորդումը Աշխարհագրության և երկրաբանության

Ֆակուլտետի 2016-2020թթ զարգացման ռազմավարական ծրագրի (իրականացման ժամանակացույց-պլան) վերաբերյալ:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝***

**Մ.Ա.Գրիգորյանը** – Իր խոսքում նա շեշտեց դրված հարցերի լրջությունը, ինչը պարտավորեցնում է ամբիոնի վարիչների, հետագա աշխատանքը:

**Ս.Հ.Հայրոյան** – Իր խոսքում Ս.Հայրոյանը փորձեց ճշտել, արդյոք իրենց կողմից ներկայացված հարցերի ընդգրկվել են զարգացման ծրագրի մեջ թե ոչ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – բաց քվեարկությամբ, միաձայն հաստատել Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2016-2020թթ զարգացման ռազմավարական ծրագիրը:

**ԼՄԵՑԻՆ** - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի դոցենտ, աշխարհագրական գիտությունների թեկնածու Պետրոս Գարուշի Դավթյանի <Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի> ամբիոնի վարիչի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Պ.Գ.Դավթյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են ԵՊՀ-ում գործող կանոնակարգին: Մանդատային հանձնաժողովը որոշել է հարգել Պետրոս Գարուշի Դավթյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խարհրդին Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի> ամբիոնի վարիչի թափուր տեղի մրցույթին մասնակցելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – **Մ.Ա.Գրիգորյանը:** Նա բարձր գնահատեց Պ.Գ.Դավթյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում: Իր խոսքում Մ.Ա.Գրիգորյանը շեշտեց, որ ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատարության ժամանակահատվածում Պ.Դավթյանը ցուցաբերել է ամբիոնի ուսումնական աշխատանքի կազմակերպման բարձր մակարդակ: - <Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի> ամբիոնը հանդիսանում է ֆակուլտետի լավագույն ամբիոններից, որի ղեկավարումը պահանջում է բարձր պրոֆեսիոնալիզմ: Վերջինիս վկայությունն է ամբիոնում տիրող բարոյահոգեբանական դրական մթնոլորտը”:

Մ.Գրիգորյանն առաջարկեց հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

**Փակ (գաղտնի) քվեարկություն** անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Ակսել Հարությունի Պոտոսյան, անդամներ՝ Սեյրան Ռաֆիկի Սուվարյան, Գագիկ Վարազդատի Մարկոսյան:

**ԼՄԵՅԻՆ** – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց. Ակսել Հարությունի Պոտոսյան հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 31-ը: Պետրոս Գարուշի Դավթյանի <Քարտեզագրության և գեոմրֆոլոգիայի> ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու հարցում կողմ են քվեարկել 31-ը, **դեմ՝ չկա, անվավեր՝ չկա:**

**ՈՐՈՇԵՅԻՆ** – Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և հաստատել Պետրոս Գարուշի Դավթյանին <Քարտեզագրության և գեոմրֆոլոգիայի> ամբիոնի վարիչի պաշտոնում:

**ԼՄԵՅԻՆ** – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը Վահագ Վարազդատի Գրիգորյանի դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին՝ դոցենտի պաշտոնի թափուր տեղի մրցույթին մասնակցելու: Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ Վ.Վ.Գրիգորյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են ԵՊՀ-ում գործող կանոնակարգի պահանջներին՝ դոցենտի թափուր տեղի մրցույթին մասնակցելու համար: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Վ.Վ.Գրիգորյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խորհրդին <Սերվիսի> ամբիոնի դոցենտի թափուր տեղի մրցույթին մասնակցելու և երաշխավորություն ստանալու նպատակով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ** – Ս.Ռ.Սուվարյանը բարձր գնահատեց Վ.Վ.Գրիգորյանի մի քանի տարվա գիտամանկավարժական գործունեությունը: Իր խոսքում Ս.Սուվարյանը նշեց, որ Վ.Գրիգորյանը իր գործունեության տարիների ընթացքում ցուցաբերել է բարձր աստիճանի պարտաճանաչություն, ուշադրություն, կրթական և ուսումնական աշխատանքներին: - Գտնում եմ, որ նա արժանի է դոցենտի կոչում ստանալու:

**Փակ (գաղտնի) քվեարկություն** անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Ակսել Հարությունի Պոտոսյան, անդամներ՝ Սեյրան Ռաֆիկի Սուվարյան, Գագիկ Վարազդատի Մարկոսյան:

**ԼՄԵՑԻՆ** – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց. Ակսել Հարությունի Պոտոսյան հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 31-ը: Վահագ Վարազդատի Գրիգորյանի <Սերվիս> ամբիոնի դոցենտի թափուր պաշտոնում ընտրվելու հարցում կողմ են քվեարկել 31-ը, **դեմ՝ չկա, անվավեր՝ չկա:**

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և հաստատել Վահագ Վարազդատի Գրիգորյանի <Սերվիս> ամբիոնի դոցենտի պաշտոնում:

#### **ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

**ԼՄԵՑԻՆ** – Սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Շամամ Գևորգյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի առաջադրման հարցը: Իր ելույթում, որպես թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիր Ս.Սուվարյանն առաջարկեց <Զբոսաշրջային դեստինացիաները որպես սոցիումի կազմակերպման գործոն> և գիտական ղեկավար առաջարկվեց ամբիոնի պրոֆեսոր Ա.Ավագյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Շամամ Գևորգյանի ատենախոսական աշխատանքի վերնագիր հաստատել <Զբոսաշրջային դեստինացիաները որպես սոցիումի կազմակերպման գործոն> և գիտական ղեկավար հաստատել ամբիոնի պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանին:

**ԼՄԵՑԻՆ** - Սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը ամբիոնի նախկին ասպիրանտ Իրանի Իսլամական հանրապետության քաղաքացի Մուստաֆա Սանիի թեկնածուական ատենախոսության վերնագրում խմբագրական փոփոխություններ կատարելու հարցը: Խոսքում Ս.Սուվարյանը ներկայացրեց նախկին վերնագիրը՝ <Ուրբանիզացման խնդիրները Իրանի Գորգանի օստանում> և առաջարկեց խմբագրել հետևյալ վերնագրով՝ <Բնածին

ճգնաժամերի կառավարման աշխարհագրական հիմնահարցերը Իրանի խոշոր քաղաքներում (Գորգան քաղաքի օրինակով)»:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի նախկին ասպիրանտ Իրանի Իսլամական հանրապետության քաղաքացի Մուստաֆա Սանիի ատենախոսական աշխատանքի վերնագիր հաստատել <Բնածին ճգնաժամերի կառավարման աշխարհագրական հիմնահարցերը Իրանի խոշոր քաղաքներում (Գորգան քաղաքի օրինակով)»:

**ԼՍԵՑԻՆ** – Մեթոդխորհրդի նախագահ պրոֆ.Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը Գրիգորյան Մ.Ա. և ուրիշներ <Սերվիսի մասնագիտության ուսումնական պրակտիկաների կազմակերպման մեթոդական ուղեցույց>-ի տպագրության ներկայացնելու վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – պրոֆ.Թ.Գ.Վարդանյանը, դոց.դոց.Ս.Ռ.Սուվարյանը, Ռ.Ս.Մովսեսյանը: Նշեցին, որ բառարանն ունի կարևոր նշանակություն <Սերվիս> մասնագիտության ուսանողների համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Գրիգորյան Մ.Ա. և ուրիշներ <Սերվիսի մասնագիտության ուսումնական պրակտիկաների կազմակերպման մեթոդական ուղեցույց>-ը երաշխավորել ներկայացնելու տպագրության:

**ԼՍԵՑԻՆ** – Մեթոդխորհրդի նախագահ պրոֆ.Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը Սերվիսի ամբիոնի պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանի <Սերվիսագիտության հիմունքներ> ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը, դոց.դոց.Գ.Վ.Մարկոսյանը, Ս.Ռ.Սուվարյանը, Պ.Գ.Դավթյանը: Նշեցին, որ ուսումնական ձեռնարկն ունի կարևոր նշանակություն <Սերվիս> մասնագիտության ուսանողների համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանի <Սերվիսագիտության հիմունքներ> ուսումնական ձեռնարկը երաշխավորել ներկայացնելու տպագրության:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան